

3. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

3.1. Դրամավարկային հիմնական ցուցանիշներ

Ըստ ՀՀ կենտրոնական բանկի նախնական տվյալների, փողի բազան 2001թ. ապրիլի վերջի դրությամբ կազմել է 64678 մլն. դրամ: Տարեսկզբի նկատմամբ այն նվազել է 7712 մլն. դրամով կամ 10,7%-ով, իսկ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ աճել է 14049 մլն. դրամով կամ 27,7%-ով:

2001թ. ապրիլի վերջի դրությամբ փողի զանգվածը կազմել է 146244¹ մլն. դրամ և տարեսկզբի նկատմամբ նվազել՝ 5409 մլն. դրամով կամ 3,6%-ով, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ աճել է 36445 մլն. դրամով կամ 33,2%-ով, իսկ մարտի վերջի նկատմամբ աճել է 1258 մլն. դրամով կամ 0,9%-ով: Նախորդ ամսվա նկատմամբ նշված փոփոխությունը պայմանավորված է զուտ ներքին ակտիվների աճով՝ 1717 մլն. դրամով, և զուտ արտաքին ակտիվների նվազմամբ՝ 459 մլն. դրամով:

2001թ. ապրիլի վերջի դրությամբ փողի զանգվածի կառուցվածքում աճ է գրանցվել բանկային համակարգից դուրս կանխիկ դրամի և ցպահանջ ավանդների համապատասխանաբար՝ 3,5%-ով (1646 մլն. դրամով), և 7,7%-ով (936 մլն. դրամով), իսկ ժամկետային, խնայողական և արտարժույթով ավանդները նվազել են 1,5%-ով (1324 մլն. դրամով): Ընդ որում, ժամկետային, խնայողական և արտարժույթով ավանդների տեսակարար կշիռը փողի զանգվածում 2001թ. ապրիլի վերջի դրությամբ կազմել է 57,8% և տարեսկզբի համեմատ աճել է 4,9 տոկոսային կետով:

Փողի զանգվածն ըստ բաղադրատարրերի

(ամսվա վերջի դրությամբ, մլն. դրամ)

	2000թ. դեկտեմբեր	2001թ.			
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ
Փողի զանգված, ընդամենը	151653	143878	140424	144986	146244
տոկոսով նախորդ ամսվա նկատմամբ	104,4	94,9	97,6	103,2	100,9
տոկոսով ընդամենը այդ թվում՝	100	100	100	100	100
Բանկային համակարգից դուրս կանխիկ դրամ	59485	48128	47351	46904	48550
տոկոսով նախորդ ամսվա նկատմամբ	116,8	80,9	98,4	99,1	103,5
տեսակարար կշիռը փողի զանգվածում	39,2	33,5	33,7	32,3	33,2
Ցպահանջ ավանդներ	11909	13234	12324	12164	13100
տոկոսով նախորդ ամսվա նկատմամբ	83,0	111,1	93,1	98,7	107,7
տեսակարար կշիռը փողի զանգվածում	7,9	9,2	8,8	8,4	9,0
Ժամկետային, խնայողական և արտարժույթով ավանդներ	80259	82516	80749	85918	84594
տոկոսով նախորդ ամսվա նկատմամբ	100,4	102,8	97,8	106,4	98,5
տեսակարար կշիռը փողի զանգվածում	52,9	57,3	57,5	59,3	57,8

1 Ընդգրկում է հաշվարկված տոկոսները:

3. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

ՀՀ ազգային արժույթով փողի զանգվածը 2001թ. ապրիլի վերջին կազմել է 68054 մլն. դրամ (ներառյալ հաշվարկված տոկոսները), իսկ բանկերի կողմից ներգրավված արտարժույթով ավանդները՝ 78190 մլն. դրամ: Ընդ որում, արտարժույթով ավանդները 2000թ. դեկտեմբերի վերջի համեմատ աճել են 3416 մլն. դրամով կամ 4,6%-ով և կազմել են փողի զանգվածի 53,5%-ը: Արտարժույթով ավանդների տեսակարար կշիռը փողի զանգվածում 2000թ. դեկտեմբերի վերջի համեմատ աճել է 4,2 տոկոսային կետով:


Փողի զանգվածի կառուցվածքը

(%-ով ընդամենի նկատմամբ)

	2000թ. դեկտեմբեր	2001թ.			
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ
Փողի զանգված	100	100	100	100	100
այդ թվում՝ ազգային արժույթով արտարժույթով	50,7	46,8	46,9	45,0	46,5
	49,3	53,2	53,1	55,0	53,5

Փողի զանգվածի տարրերի դինամիկան 2001 թ. հունվար-ապրիլին

մլն. դրամ



Փողի զանգվածի և բազայի վերոնշյալ փոփոխությունների արդյունքում դրամական բազմարկիչը ապրիլին հավասարվել է 2,3-ի:

ՀՀ կենտրոնական բանկի ռեպո համաձայնագրերի տոկոսադրույթը 2001թ. ապրիլին ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանվել է 21%, ինչը նախորդ ամսվա նկատմամբ նվազել է 2 տոկոսային կետով:

Առևտրային բանկերի վարկային ներդրումների դինամիկան

(մլն. դրամ)

	2000թ.		2001թ.			
	1.05	1.01	1.02	1.03	1.04	1.05
Վարկային ներդրումներ¹, ընդամենը	82816	96972	93499	91190	92111	86577
<i>այդ թվում՝</i>						
կարճաժամկետ	40769	39543	36390	36131	38264	36062
<i>%-ով ընդամենը վարկային ներդրումների նկատմամբ</i>	49.2	40.7	38.9	39.6	41.5	41.7
երկարաժամկետ	42047	57429	57109	55059	53848	50515
<i>%-ով ընդամենը վարկային ներդրումների նկատմամբ</i>	50.8	59.2	61.1	60.4	58.5	58.3
որից՝ վարկեր տարադրամով	70477	82267	77066	76044	75669	70676
<i>այդ թվում՝</i>						
կարճաժամկետ	34669	34984	30596	31563	33026	31525
<i>%-ով տարադրամով վարկերի նկատմամբ</i>	49.2	42.5	39.7	41.5	43.6	44.6
երկարաժամկետ	35808	47283	46470	44481	42643	39151
<i>%-ով տարադրամով վարկերի նկատմամբ</i>	50.8	57.5	60.3	58.5	56.4	55.4

2001թ. մայիսի 1-ի դրությամբ երկարաձգված և ժամկետանց վարկերը կազմել են համապատասխանաբար՝ 10586 մլն. դրամ և 17748 մլն. դրամ: Տարեվերջի նկատմամբ երկարաձգված և ժամկետանց վարկերը աճել են համապատասխանաբար՝ 256 մլն. դրամով կամ 2,5%-ով և 3096 մլն. դրամով կամ 21,1%-ով:

Բանկերում բնակչությանը ներգրավված ավանդների մնացորդը տարեսկզբի նկատմամբ աճել է 4291 մլն. դրամով կամ 9,2%-ով և 2001թ. մայիսի 1-ի դրությամբ կազմել՝ 51025 մլն. դրամ:

Բանկային համակարգում սպասարկվող հաճախորդների քանակը 2001թ. ապրիլի վերջի դրությամբ կազմել է 400952, որից ֆիզիկական անձինք՝ 332627, իսկ նրանց հաշիվների քանակը համապատասխանաբար՝ 386849 և 297747: Ընդ որում, ներառված չեն միացյալ հաշիվներում ընդգրկված հաճախորդները և վերջիններիս հաշիվների քանակը:

2001թ. հունվար-ապրիլին ՀՀ բանկային համակարգում դրամարկղային շրջանառության մուտքերը կազմել են 138792,9 մլն. դրամ (ապրիլին՝ 33326,3 մլն. դրամ), իսկ ծախսերը՝ 129528,5 մլն. դրամ (ապրիլին՝ 33801,4 մլն. դրամ): Մուտքերը գերազանցել են ծախսերի գումարը 9264,4 մլն. դրամով, իսկ ապրիլին՝ ծախսերի գերազանցումը մուտքերի նկատմամբ կազմել է 475,1 մլն. դրամ: Արտարժույթի վաճառքից մուտքերը կազմել են 37393,7 մլն. դրամ (ապրիլին՝ 7528,1 մլն. դրամ), իսկ արտարժույթ գնելու համար ծախսերը՝ 30108,3 մլն. դրամ (ապրիլին՝ 7909,1 մլն. դրամ): Արտարժույթի վաճառքից մուտքերը գերազանցել են արտարժույթ գնելու համար ծախսերի գումարը 7285,4 մլն. դրամով, իսկ ապրիլին արտարժույթ գնելու համար ծախսերի գումարը գերազանցել է արտարժույթի վաճառքից մուտքերի գումարը՝ 381,0 մլն. դրամ:

¹ ընդգրկված չեն երկարաձգված և ժամկետանց վարկերը